

ՄԵԾԻՆ ՆԱՊՈՒԼԵՈՆԻ

ԿԱՐԾԻՔ ԵՒ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

ԿՐՈՆԻՑ ՎԵՐԱՅ



Քաղաքացի նշանաւոր գրագէտն Բրիւնը-տիէր, Նումէն վերադարձին, la Revue des Deux Mondes կոչուած հանդիսին մէջ կարեւոր և շահեկան յօդուած մը գրեց կրօնական ինչորոշ վերջաւոր, որոյ մէջ հմուտ մատենագիրն կը ջննայ Հաստատել, թէ քաղաքականի վերանորոգութեան համար ամենէն աւելի ազդու միջոցն և կրօնքն է ուղղափառութիւնն: Այնպիսի հաստատուն համոզմամբ կ'ըսէ այդ բանը, որ ընկերական շատ մը կնճառ առեղծուածոց լուծուած և շարեաց դարմանը ուրիշ տեղ չի գտներ՝ բայց միայն այդ կրօնքն մէջ: Ճշմարտութիւնն, թէ և միշտ նոյն է ամէն տեղ և ամենուհի բերանը, ըլլայ Դեմոսթենէն և ըլլայ Թերսիտոսի, — ինչպէս որ ագամանդն ալ միշտ նոյն յարգը սեռի, ըլլայ արքունի Թագին վրայ և ըլլայ վաճառանոցի մը ապակափեղկին ներքև, — սակայն, յայտ մարդկանց, մերթ աւելի ազդեցիկ և փայլուն կ'երևի նա, երբ մեծածնաց բերնէն հնչէ: Այս նպատակաւ գաղղիացի Թերթէ մը քաղերով, կը թարգմանենք մեր Թերթին մէջ մեծին Նսպողենի ունեցած զգացումները և կարծիքները կրօնից մասին, որ ներկայապէս Թերթն աւելի քան ուրիշ ու է ինչորի՞ն խօսուելու և վիճուելու պէտք ունի, քանի որ գծաբխտարար հեռագէտէ կ'արտաքսուի բայն: կրօնքն ըսել կ'ուզեմ, թէ ընտանեկան և թէ գաղտնական կրթութեան շրջանակէն, և որուն պէտքն հետեւաբար — ընկերական ներկայ շարիքներէն խրատեալ — աւելի զգալի է՛լլայ մեր օրերը:

« Արդի փիլիսոփայք, կը գրէ կայսրն, կը ջննան Քաղաքիան համոզել, թէ կաթողիկէ կրօնքն անհաշտ թշնամի է ո՞ր և է աւակապետական դրութեան և հասարակապետութեան. աստի ծագեցան այն ամէն անգուժ հալածանքներն, զորս գաղղիական հասարակապետութիւնն յարոյց անոր պաշտօնէից

զէմ. աստի այն բոլոր տանջանքներն և արհաւիրք, զորս կրեց թշուառ ժողովուրդն:

« Քաղաքացիաց պէտքիսութիւնն, որ կը տիրապետէր Քաղղիոյ մէջ կրօնից նկատմամբ, այս անկարգութեանս մեծագոյն պատճառներէն մին եղաւ: Բայց յետոյ փորձն ուղղեց Քաղղիացաց սխալանքը և համոզեց գիտնալ, թէ ուղղափառութիւնն քան ուրիշ ամենայն կրօնք աւելի յարմարագոյն է կառավարութեան այլ և այլ ձևերուն. և կը նպաստէ յատկապէս աւակապետական տէրութեան, անոր իրաւունքները հաստատելով և սկզբունքները լուսաւորելով:

« Եւ այլ փիլիսոփայ եմ, և գիտեմ թէ ո՞ր է ընկերութեան մէջ չի կրնար մէկը առաքինի և արգար համարուի՞նք է չի գիտեր թէ ուստի կու գայ և ո՞ր կ'երթայ: Այս բանն չէ կարող ուսուցանել մեզ սոսկ մտայ բանն: Արանց կրօնից՝ մարդ մթութեան մէջ խորխափելով կը քայլէ. և մի միայն կաթողիկէ կրօնքն է՝ որ կը փարատէ մարդաստարակոյսները և կը լուսաւորէ զնա իւր սկզբան և վախճանին նկատմամբ »:

կայսրն օր մը խօսելով Քաղղիոյ մէջ կաթողիկէ կրօնից վերահաստատման մասին, յետ Յեղափոխութեան, կ'ըսէ.

« Կրթոր ձեռք առի կառավարութեան ղեկը, արդէն որոշ և հաստատուն զազակարներ ունէի ընկերութիւնը կազմող տարեաց վրայ. կշռած էի կրօնից կարևորութիւնը, համոզուած էի անոր, և վճռեք էի վերահաստատել զայն:

« Գրեթէ անհաւատալի են այն ամեն զբժուարութիւնք և ընդհիմութիւնք, որոնց յաղթեցի, կաթողիկէ կրօնք վերահաստատելու համար: Վասն զի բազումք աւելի կ'ընտրէին բողոքական դաւանանքը ընդունիլ քան յանձն առնուլ Քաղղիական (Concordat) պայմանները. և շատ աշխատեցայ մինչև որ կրցայ ընդունել ընել զայն անոնց »:

« Անտարակոյս, կ'ընէ նոյն ինքն, յետ այն պիտի չդիտութեանց որոնց յաշորդցի ես, մինչդեռ պետութեան մը աւերակաց վրայ կեցցեր էի, կրնայի անխտիր ըստ կամ ընտրել կամ կաթողիկէ կրօնքը և կամ բողոքական գաւանակքը. մանաւանդ որ ժամանակին պարագայք ևս կը ստիպէին զիս նախածնածար ընտրել բողոքականութիւնը, սակայն իրօք կապուել էի ես իմ Հայրենական կրօնիս Հետ, և զայն Հաստատուն պահելու շատ մեծ պատճառներ ունէի »:

Քաղաքական տեսութեամբ ևս մտածելով, մեծն Նապոլէոն աւելի օգտակար կը համարի ուղղափառութիւնը՝ քան ուրիշ ո՛ր է է կրօնք. սակայն կը սխալի նա, երբ կրօնքը իշխանասիրութեան կամ քաղաքականութեան իբր լոկ գործիք մը կը նկատէ. վասն զի այնուհետեւ կրօնքն կը կորուսանէ իւր աստուածային կնիքը, որով միայն սիրելի և պաշտելի պէտք է լինի ամենուսն այլ »:

« Յիբաւի բողոքականութիւնը ընտրելով կամ տէրութեան կրօնք վճռելով զայն, կ'ընէ, ինչ պիտի չաւելի. ոչինչ, բայց միայն մնաս: Փաղղիոյ մէջ երկու մեծ կուսակցութիւններ պիտի Հաստատէի, գրեթէ Հաւասարազօր, մինչդեռ կ'ուզէի ես բնաջինջ ընել զանոնք. կրօնական վտանգաւոր բանակաութեանց պատճառ պիտի ըլլայի, մինչդեռ դարուս լուսաւորութիւնք և իմ կամօք ուրիշ նպատակ չ'ունէին՝ բայց միայն անհետ ընել զանոնք »:

« Այս երկու կուսակցութիւնք՝ իրարու հետ կուուելով բոլոր Փաղղիոյն պիտի ոչնչացընէին, և գերի պիտի ընէին Եւրոպոյ, մինչդեռ կը փափարէի ես տէր ընել զինքը աշխարհիս »:

Յետոյ կը յանելու. —

« Միթէ Փաղղիոյ Հին կրօնքն բողոքականութիւնն է: Միթէ դա այն կրօնքն է, որ յետ քաղաքական երկարատեւ պատերազմաց, յետ անթիւ մրցմանց, վերջնական կերպով յաղթանակեց իբրու աւելի յարմարա-

զոյն մեր ազգին սովորութեանց և Հանճարոյն... Կրօնքի մը զլուսւոր գեղեցկութիւններէն մին՝ են նաև աւանդութիւնք և յիշատակք: Եւ ահա միայն ուղղափառ կրօնքն է մեր ծննդավայրին գաւանանքն, յորում ծներ և սներ ենք, որ ունի հիմնական և Հաստատուն կառավարութիւն մը, որ կ'արգելու կոռնները, որչափ որ կարելի է արգելու կուուսէր բնաւորութեամբ մարդիկ ներուս: »

« Չկայ ընկերութիւն մը առանց բարոյականի, և լաւ բարոյական մը չէ կարելի ըլլալ առանց կրօնքի. ապա ուրեմն միայն կրօնքն է որ պետութեան մը Հաստատուն և տեղը նեցուկ կրնայ ըլլալ: Ընկերութիւն մը առանց կրօնքի կը նմանի առանց կողմնացուցի նաւու մը. նաւ մը, այսպիսի վիճակի մէջ, չէ կարող ապահով ըլլալ իւր նամբուն վրայ, և ոչ յուսալ թէ կարենայ նաւահանգիստ հասնել »:

« Ընկերութիւն մը առանց կրօնից, միշտ յուզուած և անընդհատ բուռն կրից բախումներէն խախտեալ, ներքին պատերազմի մը բոլոր ազեռալի Հետևանքները կը կրէ. հետևաբար կը զահավիժի այնպիսի անդրնդի մը մէջ, որ ուշ կամ շուտ անվրէպ Հիմնադասակ կը կործանի »:

Երեկոյ ժը, Նապոլէոն կը շրջապայեր պետութեան խորհրդոյ անդամի մը հետ Մալմեզոնի պարտիզին մէջ. խօսակցութիւնը կրօնից վրայ էր. Արկուլի յաղթականն ըսաւ.

« Անցեալ կիրակի այստեղ կը շրջապայէի միայնութեան և բնութեան լուսութեան մէջ, երբ յանկարծ Ռիւշլի զանգակին ձայնն Հնչեց ականջիս. սիրտս յուզուեցաւ. այնպիսի զօրաւոր է առաջին սովորութեանց և դաստիարակութեան ազդեցութիւնն: Այն ստեղծող ինքնիրենս. Այս ո՛րքան աւելի պիտի գորովի այս ձայնս միամիտ և բարեպաշտ մարդկանէ սիրտը: Թող ձեր փիլիսոփաներն և գաղափացրազէտք պատասխանեն այս Հարցմանս: Այն պատճառ կրօնք մը պէտք է ժողովրդեան »:

